ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N-----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՂԱԶԱԽ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԱԲԱՅ ԿՈՒՆԱՆԲԱԵՎԻ ՊԱՏՎԻՆ ԱՅԳԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածի 18-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ալմա-Աթայի փողոցում գտնվող 2400 քմ ընդհանուր մակերեսով այգին անվանակոչել ղազախ բանաստեղծ, ղազախական գրականության հիմնադիր Ա. Կունանբաևի պատվին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՂԱԶԱԽ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԱԲԱՅ ԿՈՒՆԱՆԲԱԵՎԻ ՊԱՏՎԻՆ ԱՅԳԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ալմա-Աթայի փողոցում գտնվող այգին անվանակոչել ղազախ բանաստեղծ, ղազախական գրականության հիմնադիր Աբայ Կունանբաևի անվամբ:

- Ղազախստանի Հանրապետության նախագահի՝ 2024 թ. ապրիլի 14-15-ը Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ընթացքում բարձրագույն մակարդակում ձեռք է բերվել պայմանավորվածություն փոխադարձության սկզբունքի պահպանմամբ երկու երկրների մայրաքաղաքներում ղազախական գրականության հիմնադիր Աբայ Կունանբաևի և հայ գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի պատվին փողոցի/պուրակի անվանակոչման շուրջ:
- Ս. թ. հուլիսին ղազախստանյան կողմից հայաստանյան կողմի դիտարկմանն է ներկայացվել Աստանայում Մեսրոպ Մաշտոցի անվամբ փողոցի անվանակոչման 4 բարեկարգ տարբերակներից բաղկացած առաջարկ (այդ թվում՝ ՂՀ մայրաքաղաքի գլխավոր մարզադաշտին՝ «Աստանա Արենային» հարող տարածքում):
- Աստանա քաղաքում առկա է Արամ Խաչատրյանի անվան փողոց, իսկ Ալմաթի քաղաքում՝ Հայկական փողոց: Երևանի Ավան վարչական շրջանում կա Ալմա-Աթայի փողոց, իսկ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ ղազախ գրող Ջամբուլ Ջաբաևի անվան փողոց:
- Բեռլինում, Բուդապեշտում, Ժնևում, Կահիրեում, Մոսկվայում, Փարիզում, Դելիում, Պեկինում, Թբիլիսիում, Թեհրանում, Ստամբուլում և այլ քաղաքներում կան Աբայի անվան փողոցներ, պուրակներ և հուշակոթողներ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստան-Ղազախստան երկկողմ հարաբերությունների խորացման առկա միտումները՝ ՀՀ ԱԳ նախարարությունը կարևորում է Երևանում Ա. Կունանբաևի պատվին այգու անվանակոչումը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ղազախստանյան կողմի առաջարկության հետ համադրելիությունն ապահովելու անհրաժեշտությունը, առաջարկում ենք Երևանի քաղաքապետարանի կողմից քննարկման ներկայացված՝ Ավան վարչական շրջանի Ալմա-Աթայի փողոցում գտնվող 2400 քմ ընդհանուր մակերեսով այգին անվանակոչել Ա. Կունանբաևի պատվին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ